Սոցիալական Ձեռներեցների դպրոց
School of Social Entrepreneurs
© SE School & SEI Academy

«15» օգոստոս 2025 թ.
SSE-201025-123

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հարգելի՛ պարոն Կոստանդյան,

Տեղեկացնում ենք Ձեզ,որ «Դարձի՛ր Սոցիալական Ձեռներեց, շենացրո՛ւ Քո Փամբակ համայնքը», Սոցիալական ձեռնարկատիրության դերը ՀՀ մարզերի զարգացման գործում գործարարության խթանման նոր բիզնես մոդել» կրթական ծրագրի շրջանակներում մեր կառույցը ս/թ հունիսի 16-ից մինչև հունիսի 19-ը ներառյալ դեմ առ դեմ հանդիպումներ է ունեցել Փամբակ համայնքի բնակիչների շրջանում, իսկ հունիսի 23-ին և 29-ին՝ առցանց «ZOOM» հարթակով (մանրամասները ներկայացված են հաշվետվության N1 հանդիպումների ժամանակացույց աղյուսակում): Հանդիպումների ընթացքում կրթական ծրագրին գրանցվել և մասնակցել են Փամբակ համայնքի 15 բնակավայրերի 174 բնակիչներ, բնակավայրերի ղեկավարներ, բնակավայրերի վարչական աշխատակիցներ (մանրամասները ներկայացված են հաշվետվության N1 մասնակիցների թիվը՝ ըստ բնակավայրերի N2 աղյուսակում):

Նշենք նաև, որ ս/թ օգոստոսի 3-ից մինչև օգոստոսի 10-ը ներառյալ իրականացվել է Ընդունելության 1-ին փուլը՝ հարցազրույցների շարք կրթական ծրագրին գրանցված բնակիչների շրջանում (վերջինս ենթադրում է առցանց և/կամ առերես հարցազրույց դիմորդների հետ), որին մասնակցել են մոտ 173 բնակիչներ, որից 2-րդ փուլ անցել են 88 բնակիչներ (վերջինս ենթադրում է դեմ առ դեմ անձի որակները և գործարար ոլորտի պրակտիկ գիտելիքները գնահատող «հարցաթերթ-թեստ»-ի լրացում) : Կրթական բուն ծրագրի կազմում ընտրվելու են ընդունելության երկու փուլերը հաղթահարած և բարձր միավորներ հավաքած մինչև 18 հիմնական ունկնդիր/մասնակիցներ (Փամբակ համայնքի տարբեր բնակավայրերում բնակվող անձինք, ովքեր ցանկանում են ընդգրկվել կրթական ծրագրում), ինչպես նաև մինչև 5 ազատ ունկնդիր/մասնակից (մասնակիցներ, ովքեր աշխատում են համայնքապետարանում և/կամ մատուցում են ծառայություններ համայնքի զարգացման նպատակով, ցանկանում են մասնակցել ընդհանուր տեղեկատվություն ստանալու նպատակով: Ազատ ունկնդիրների ուսման վճարը չի ֆինանսավորվում համայնքապետարանի բյուջեից, ֆինանսավորում է մեր կառույցը (այսուհետև՝ ՍՁ դպրոց)):

Ընդհանուր կրթական խմբում ընդգրկված ունկնդիր/մասնակիցներից յուրքանչյուրի հետ նախքան կրթական ծրագիրը սկսելը կնքվում է ներքին պայմանագիր, որում նշված են կրթական ծրագրի իրականացման բոլոր քայլերը, հետագա անելիքները, ինչպես նաև ունկնդիր/մասնակիցների լիազորությունների շրջանակները:

• Էլ. փոստ՝ ssearmenia@gmail.com I Հեռ՝ +374 (98)005513 •
• e-mail: ssearmenia@gmail.com I Tel: +374 (98)005513 •

06963112
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N 1958
«15» 08 2025 թ.

Սոցիալական Ձեռներեցների դպրոց
School of Social Entrepreneurs
© SE School & SEI Academy

Ակնկալում ենք Ձեր համաձայնությունը կրթական ծրագրի մեկնարկն ազդարարելու համար, որի առաջին քայլը երկկողմանի համագործակցության պայմանագրի կնքումն է: Պայմանագրում կրթական ծրագրի Փամբակի համայնքապետարանի համաֆինանսավորման մասը կազմում է 7.000.000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ ներառյալ հարկերը:

Նամակին կից ներկայացվում է `

1. Դարձի՛ր սոցիալական ձեռներեց , շենացրո՛ւ (զարգացրո՛ւ) ՔՈ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԸ «Սոցիալական ձեռնարկատիրությունը՝ որպես Փամբակ համայնքի բնակիչների շրջանում գործարարության խթանման նոր բիզնես մոդել» կրթական ծրագրի ս/թ հունիսի 19 -ից մինչև օրս կատարված աշխատանքների մասին հաշվետվությունը (դեմ առ դեմ հանդիպումների ժամանակացույց, հանդիպումներին մասնակիցների թիվը՝ ըստ բնակավայրերի, առցանց և դեմ առ դեմ հանդիպումներից հատվածներ, առաջարկություններ / մտքեր, որոնք գրառվել են հանդիպումների ընթացքում, միասին կարող ենք ավելին, սոցիալական ձեռներեցի (#ChangeMakers) սահմանումը, մեր գործունեության արդյունքները համառոտ, համայնքապետարանի հետ կնքվող պայմանագիր, դեմ առ դեմ հանդիպումների մասնակիցների գրանցամատյանը (26 էջ))
2. Հուշագրի օրինակը՝ կնքված ԱՍՀՆ նախարարության հետ (4 էջ) ,
3. ԱՍՀՆ նախարարի գրությունը ՏԿԵՆ նախարարին (1 էջ) ,
4. ՏԿԵՆ նախարարի երկու գրությունները (3 էջ),
5. Կրթական ծրագրի նկարագիրը՝ WORD (21 էջ) և PPT ձևաչափով (62 տեսասահիկ) ,
6. ՍՊԸ-ի պետական ռեգիստրի քաղվածքը (2 էջ):

Առդիր՝ 57 էջ:

(ստորագրություն)

«Սոցիալական Ձեռներեցների դպրոց» ՍՊԸ
տնօրեն՝ Գոհար Մկոյան
Կ.Տ.

• Էլ. փոստ՝ ssearmenia@gmail.com I Հեռ՝ +374 (98)005513 •
• e-mail: ssearmenia@gmail.com I Tel: +374 (98)005513 •